Հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սերգեյ Առաքելյան

«12» 05 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ալիսա Մանվելի Սմբատյանի

«Օպերատիվ-հետախուզական գործունեությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում» ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է քրեական դատավարությունում օպերատիվ-հետախուզական գործունեության հիմնախնդիրներին:

Ատենախոսը փորձել է մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հայրենական իրավագիտության մեջ առաջին համապարփակ գիտական հետազոտությունը:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում օպերատիվ-հետախուզական գործունեության (այսուհետ՝ ՕՀԳ) ոլորտում ծագող հարաբերություններն են, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գիտության այն տեսական դրույթները, որոնք արտացոլում են ՕՀԳ իրավական կարգավորման առանձնահատկությունները:

Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետության քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական օրենսդրության նորմերն են, որոնք կարգավորում են ՕՀԳ էությունը, ՕՀԳ իրականացնող մարմնի կազմակերպման կարգը, ինչպես նաև քրեական դատավարության մասնակիցների միջև իրավահարաբերությունները՝ դատավարության իրականացման ընթացքում: Հատուկ ուշադրություն է դարձվել այն գիտական աշխատություններին, որոնք նվիրված են Հայաստանի Հանրապետությունում ՕՀԳ արդի խնդիրներին:

Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետության օրենսդրության, առաջադեմ գիտական հետազոտությունների և էմպիրիկ նյութի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա քրեական դատավարությունում ՕՀԳ տեսական հայեցակարգի մշակումն է, որը կնպաստի Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխությունների, ինչպես նաև կոնկրետ առաջարկություններ ներկայացնելը՝ ուղղված նշված փոփոխությունների իրավաբանական ուղեկցմանը և իրագործմանը:

Հետազոտության նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ որոշել քրեական դատավարությունում ՕՀԳ էությունը, դրա իրավական կարգավորումը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ուսումնասիրել ՕՀԳ իրականացնող մարմինների կարգավիճակը ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունում, վերլուծել ՕՀԳ իրականացնող մարմինների գործունեության կազմակերպումը քրեական դատավարությունում և նրա համագործակցությունը քննիչի հետ, անցկացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների համեմատական-իրավական վերլուծություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ուսումնասիրել ՀՀ քրեական դատավարությունում ՕՀԳ արդյունքների ներկայացման և օգտագործման հիմնական ուղղությունները:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հանցավորության դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է իրականացնել քրեաիրավական, քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական բնույթի լուրջ և հետևողական մի շարք միջոցառումներ՝ հիմնված իրավական պետությանը բնորոշ օրինական նախադրյալների վրա: Մինչդեռ գործող օրենսդրություն ունի բազմաթիվ թերություններ, որոնք կապված են ՕՀԳ արդյունքում տեղեկատվության ստացման, այն հատուկ դատավարական ձևով դրսևորման, որը կարգավորված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, տեղեկատվության արժանահավատության և թույլատրելիության նախնական գնահատման, ինչպես նաև քրեական դատավարությունում ապացուցման գործընթացում օգտագործման հետ: Բացի այդ, հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև այնպիսի հարցերի իրավական կարգավորման բացերը վերացնելու անհրաժեշտությամբ, ինչպիսին են ՕՀԳ ընթացքում մարդու իրավունքների երաշխավորումը, արդյունավետ գերատեսչական հսկողության ապահովումը, առանձին հանցատեսակների դեմ պայքարում ավանդական կիրառվող միջոցները (որպես կանոն՝ քրեադատավարական) ՕՀԳ միջոցով ստացված տեղեկատվությամբ քրեական դատավարությունում հավելումը:

Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ գիտական մակարդակով անցկացվել է քրեական դատավարությունում ՕՀԳ խնդիրներին վերաբերյալ ուսումնասիրություն: Հետազոտության մեջ փորձ է արվել ուսումնասիրել և բազմակողմանիորեն վերլուծել ինչպես ՕՀԳ, այնպես էլ քրեական դատավարությունում ծագող հարաբերությունները: Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, դրանցում ընդգրկված 5 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տալիս հեղինակին համակարգային և բազմակողմանի եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքներն արտացոլված են սեղմագրում, հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրների առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Աշխատության ներածությունում՝ «Հետազոտության արդյունքների գիտական նորույթը» հատվածում (էջ 10) ատենախոսը նշում է՝ խորհրդային ժամանակներից ժառանգված քրեական դատավարության օրենսդրության մոդելի առանձնահատկություններից մեկն այն է, որ չի գծվել հստակ սահմանազատում ոստիկանության, դատախազության և դատարանների ֆունկցիաների միջև: Արդյունքում՝ ոստիկանական և դատական գործունեության միջև ճշգրիտ չեն տարանջատվել «քրեադատավարականը» և «ոչ քրեադատավարականը», ինչի հետևանքով ոստիկանությունը ստանձնել է դատարանի և դատախազական լիազորություններ, մասնավորապես՝ արարքներին իրավաբանական գնահատականներ տալը և դատավարական որոշումներ կայացնելը:

Որոշակի առումով իրավացի այս բնորոշումից հետո ատենախոսն աշխատությունում, այնուամենայնիվ, չի անցկացնում զուգահեռներ, թե կոնկրետ ինչն է իր կողմից արձանագրվածի գիտական նորույթը և ինչն է տեսնում հեռանկարում՝

նմանատիպ գործնական խնդիրներից խուսափելու համար: Ատենախոսը չի մատնանշում այն փաստը, որ հետաքննության մարմնին ու քննիչին վերը նշված լիազորությունները տալով փաստացի փորձ էր արվում լուծել մինչդատական վարույթում դատարաններին ավելորդ չծանրաբեռնելու հարցը: Հետագայում, պրակտիկ իրավաբանության զարգացման և մինչդատական փուլում դատական վերահսկողության և դատարանների դերի բարձրացմանը համընթաց, այդ հարցը դարձավ ավելի ակտուալ, և նշված խնդիրը լուծելու համար ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը հրաժարվեց հետաքննության մարմնին վարույթ նախաձեռնելու և քննություն իրականացնելու լիազորություններով օժտելու գաղափարից՝ հետաքննության մարմնին վերապահելով միայն ՕՀԳ իրականացնելու և քննությանն օժանդակելու գործառույթներ, որը, կարծում ենք, աներկբա կհանգեցնի վարույթ իրականացնող նախաքննական մարմինների և դատարանների գերծանրաբեռնվածության: Քննարկվող խնդրի լիարժեք լուծում ատենախոսությունում չի առաջարկվում:

2. Ներածությունում ատենախոսն անդրադառնում է քրեական դատավարության գործող օրենսգրքով օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների նմանությանը, միմյանց կրկնությանը և նշում, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումները պետք է նախորդեն քննչական գործողություններին (էջ 12): Կարծում ենք՝ ճիշտ կլիներ անդրադառնալ նաև առկա այն խնդրին, որ վերը նշված մոտեցման պայմաններում պրակտիկայում քրեական գործերով նախաքննության ընթացքում քննիչների մոտ նման իրավիճակը բերում է և բերելու է որոշակի իրավական ապատիայի, «անգործության» և ինքնուրույն քննչական գործողություններ պլանավորելու ու կատարելու ցանկության բացակայության: Խնդիրն այն է, որ հետաքննության մարմինը, հասկանալով, որ գործը «շտապ» հարուցելուց հետո ուղարկելու է ըստ քննչական ենթակայության և ինքն այլևս անելիք չունի, շատ դեպքերում ինքնուրույն ոչինչ չի նախաձեռնում ու սպասում է գրավոր հանձնարարության, որը շատ ժամանակ տրվում է տևական ժամանակ անց, ժամանակավրեպ է լինում, իսկ քննիչները, հետաքննության մարմիններին ընդհանրական

և մոտավոր հանձնարարություններ տալով, ակնկալում են նրանց կողմից ձեռնարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետ անցկացում: Փաստորեն, ստեղծվում է մի իրավիճակ, երբ իրավապահ մարմիններն ապացույց ձեռք բերելու պարտականությունը գցում են իրար վրա, որի արդյունքում կորում է գործընթացի արդյունավետությունը:

3. Ատենախոսության «Օպերատիվ-հետախուզական գործունեության էությունը և դրա իրավական կարգավորումը» վերնագրով 1-ին գլխի «Օպերատիվ-հետախուզական գործունեության էությունը և դրա իրավական կարգավորումը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում» վերտառությամբ 1.1. պարագրաֆում (էջ 30) ատենախոսն առաջարկում է օրենքի մեջ կատարել փոփոխություն և արձանագրել, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ցանկը կարող է փոփոխվել միայն օրենքով: Նման մոտեցումն անհասկանալի է, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը կարգավորում է այդ հարցը, մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով»: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում այդպիսի կարգավորում նախատեսելն ավելորդ է:

4. Ատենախոսության «ՀՀ-ում քրեական դատավարության օպերատիվ-հետախուզական ապահովման կազմակերպահրավական առանձնահատկությունները» վերնագրով 2-րդ գլխի «Օպերատիվ աշխատակցի և քննիչի համագործակցության ձևերը» վերտառությամբ 2.1. պարագրաֆում (էջ 90) ատենախոսն առաջարկում է լրացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածը և հնարավորություն ընձեռել դատախազին ու քննչական ստորաբաժանման ղեկավարին բազմադրվագ ու մեծածավալ գործերով քննչական խումբ կազմելիս դրանում ընդգրկել նաև օպերատիվ աշխատակիցներին: Գտնում ենք, որ առաջարկը տեղին է, սակայն, հաշվի առնելով քննչական, դատախազական մարմինների ու հետաքննության մարմնի տարանջատումը, այն անիրական է: Բացի այդ, ՀՀ քրեական

դատավարության նոր օրենսգիրքը նման որոշում կայացնելու իրավասություն ունեցող հավանական սուբյեկտների (վերադաս դատախազ, հսկող դատախազ, քննչական մարմնի ղեկավար) համար չի նախատեսել նման լիազորություն, և դա պրակտիկայում կբերի լուրջ խնդիրների, ինչպես նաև քննչական խմբի կողմից կատարված քննչական և դատավարական գործողությունների ոչ իրավաչափության:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները կրում են մասնավոր և խորհրդատվական բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևաբար, Ալիսա Մանվելի Սմբատյանի «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում» թեմայով հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ալիսա Մանվելի Սմբատյանի «Օպերատիվ հետախուզական գործունեությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում» թեմայով վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ:

Ատենախոսությունը 2022 թվականի մայիսի 10-ից մայիսի 17-ը դրվել է գրավոր քվեարկության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել գիտական խորհրդի անդամների դրական եզրակացությանը: Ատենախոսության քննարկմանը մասնակցել են՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Առաքելյանը, Մարգարիտ Ամյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Գաբուզյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Հովհաննիսյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Նիկողոսյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Սերգեյ Մարաբյանը, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Արտաշես Խուրշուդյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Արշալույս Մինասյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գևորգ Իսրայելյանը:

Արդարադատության ակադեմիայի
գիտական խորհրդի քարտուղարի
պարտականությունները կատարող,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գևորգ Իսրայելյան